ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2022 թվականի N 1435 – Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1667-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների, ձևերի և կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 1667-Ն որոշման՝

1) N 3 հավելվածի՝

ա. 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով՝

«5) մուտքի և ելքի տեղամասերում լիազոր մարմնի հետ սույն կարգի համաձայն պայմանագիր կնքած հայտատուի և ձկնորսի միջև ձկնորսության իրականացման նպատակով կնքված պայմանագրի առկայության ստուգում՝ նախքան ձկնորսի լիճ մուտք գործելը։»,

բ. 7.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7.2. Հայտերի ընդունումից հետո լիազոր մարմինը ձկան և խեցգետնի օգտագործման առավելագույն չափաքանակը բաշխում է սույն կարգով սահմանված պահանջները բավարարող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հայտերով ներկայացրած ձկնորսների ընդհանուր քանակի վրա: Չափաքանակի բաշխման հաշվարկի ժամանակ միևնույն ձկնորսի տվյալը հաշվարկվում է մեկ հայտատուի կողմից ներկայացված լինելու պարագայում: Տարբեր հայտատուների կողմից ձկնորսների տվյալների համընկնման դեպքում այդ տվյալները չեն հաշվարկվում:».

2) N 1 ձևը «Որսամիջոցները և դրանց նկարագիրը» բառերից հետո լրացնել «, ձկնորսների քանակը» բառերով.

3) ամբողջ տեքստում «ֆիզիկական անձի» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջով պայմանավորված, 2022 թվականի օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 5-ը Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որսի իրականացման հայտ ներկայացրած իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը վերանայում են իրենց հայտերով ներկայացված ձկնորսների վերաբերյալ տվյալները և վերանայված հայտերը 3-օրյա ժամկետում ներկայացնում են լիազոր մարմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ